

1.2.5. Տրանսպորտ⁶

Ծրագրով նախատեսված սույն ոլորտի թվով 20 աշխատանքները (125001 - 125020 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

Տրանսպորտի գծով վիճակագրական տեղեկությունները հավաքագրվել և մշակվել են թվով 21 պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերով (որոնցից 6-ը՝ ամսական, 7-ը՝ եռամսյակային, 10-ը տարեկան պարբերականությամբ): Ընդ որում, ավտոմոբիլային տրանսպորտի գծով՝ 5 պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերով, օդային տրանսպորտի՝ 7, երկաթուղային տրանսպորտի՝ 3, քաղաքային էլեկտրատրանսպորտի՝ 3, ավտոմոբիլային ճանապարհների՝ 1 և հիմնական միջոցների գծով՝ 1 հաշվետվության ձևերով: 125006 ծածկագրով «Ճանապարհատրանսպորտային պատահարներ» վիճակագրական աշխատանքը կատարվել է ամսական, եռամսյակային և տարեկան պարբերականությամբ:

Հավաքագրվել, մշակվել և ամփոփվել է.

- ավտոմոբիլային տրանսպորտի գծով պետական վիճակագրական հաշվետվությունների թվով 5 ձև, դրանից ամենաձախուհու ձև թիվ 1-տրանսպորտ տարեկան հաշվետվությունն է, որը հավաքագրվել է մոտ 3000 կազմակերպություններից,

- օդային տրանսպորտի գծով՝ պետական վիճակագրական ամփոփ հաշվետվությունների 8 ձև,

- երկաթուղային տրանսպորտի գծով՝ պետական վիճակագրական ամփոփ հաշվետվությունների 3 ձև,

- քաղաքային էլեկտրատրանսպորտի գծով՝ պետական վիճակագրական հաշվետվությունների 3 ձև,

- ավտոմոբիլային ճանապարհների գծով՝ պետական վիճակագրական հաշվետվության 1 ձև,

- կապի համակարգի գծով՝ պետական վիճակագրական հաշվետվությունների 10 ձև,

- ճանապարհատրանսպորտային պատահարների գծով՝ պետական վիճակագրական ամփոփ հաշվետվության 1 ձև,

- հիմնական միջոցների գծով՝ 1 պետական վիճակագրական հաշվետվություն, որը հավաքագրվել է մոտ 500 կազմակերպություններից:

Հաշվի առնելով ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության առաջարկությունը՝ փոփոխության է ենթարկվել «Օտարման նպատակով ավտոմեքենաների հաշվառումից դուրս գրման մասին» ձև թիվ 2-ավտո (տարեկան) պետական վիճակագրական ամփոփ հաշվետվությունը և դրա լրացման հրահանգը: Առաջարկությունը հնարավորություն է տվել վիճակագրական հաշվետվությունում հստակեցնել ավտոմեքենաների օտարման հաշվառումն ըստ մակնիշների:

Հայաստանի Հանրապետության Վիճակագրության պետական խորհրդի 2004թ. հունիսի 24-ի նիստում թիվ 14-Ն որոշումով հաստատվելուց հետո վերոնշյալ

⁶ Տես՝ Ծրագիր, Հավելված I:

հաշվետվական ձևը և դրա լրացման հրահանգը գրանցվել են ՀՀ արդարադատության նախարարությունում:

«ՏԱՄԻՍ» ծրագրի «Վիճակագրություն-8» նախագծի շրջանակում նախատեսվող «Ուղևորատար ավտոմոբիլային տրանսպորտի հետազոտության» իրականացման համար մշակվել են անհրաժեշտ ծրագրային նյութերը:

Աշխատանքներ են իրականացվել վարչական ռեգիստրների կատարելագործման և տրանսպորտի և կապի ոլորտի վիճակագրական հաշվառման դաշտի արդիականացման ուղղությամբ:

Սահմանված պարբերականությամբ (ամսական, եռամսյակային և տարեկան) մշակվել և ամփոփվել են տրանսպորտի ոլորտը բնութագրող հիմնական ցուցանիշներն ըստ տրանսպորտի տեսակների, ինչպես նաև ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի: